

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎԱԽՃԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԶԱԻՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Համաշխարհային Երկրորդ Պատերազմին դարձակէտը եղան Ստալինկրատի եւ էլ-Ալամէյնի ճակատամարտերը, եւ Նացի Գերմանիան բռնեց պարտութեան ճամբան: Դաշնակիցները անցան յարձակողականի: Զօր. Այզընհաուրրի հրամանատարութեան տակ Դաշնակից ուժերը յառաջացան հիւսիսային Ափրիկէի մէջ եւ 7 Մայիս 1943-ին ընդունեցան անձնատուութիւնը Ալամէյնէն նահանջող գերման ուժերուն: Ապա անգլեւամերիկեան ուժերը գրաւելով Սիկիլիան՝ յառաջացան Իտալիոյ մէջ: Տապալեցաւ Մուսոլինին: 6 Յունիս 1944-ին Դաշնակից Ուժերը ցամաքահանում մը կատարեցին Ֆրանսա եւ 25 Օգոստոսին ազատագրեցին Փարիզը: Մինչ այս, սակայն, տիտանեան քայլերով կը յառաջանար Կարմիր Բանակը, որ գրաւեց Ռումանիան, Ֆինլանտան եւ Պուլկարիան, իսկ Դաշնակից Ուժերը յաջորդաբար ազատագրեցին Պելճիքան եւ Հոլանտան. Կարմիր Բանակը նացի լուծէն ազատագրեց Լեհաստանը, Հունգարիան եւ Աւստրիան: Արեւելքէն եւ արեւմուտքէն դէպի Գերմանիա յառաջացող Խորհրդային եւ Դաշնակից Ուժեր իրարու միացան Թորկօ քաղաքին մէջ 25 Ապրիլ 1945-ին: Պատերազմը մտեր էր իր վերջնական փուլէն ներս:

1. ԵԱԼԹԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԵՒ ԹՈՒՐԳԻԱՆ

Համաշխարհային Երկրորդ Պատերազմը կը մօտենար իր աւարտին: Կատարելապէս վստա՛հ իրենց մօտալուս յաղթանակին՝ Դաշնակիցները ձեռնարկեցին կարգ մը խորհրդաժողովներու գումարումին քննարկելու համար պատերազմին հետեւանքները եւ առայդ որոշումներու յանգելու: Այդ ժողովներու շարքին էր Եալթայի խորհրդաժողովը:

Խրիմի Եալթա քաղաքին մէջ Դաշնակիցներու գագաթի ժողովը գումարուեցաւ 4-11 Փետրուար 1945-ին Ռուզվելթի, Ստալինի եւ Չըրչիլի մասնակցութեամբ: Փետրուար 7-ին անգամ մը եւս քննու-

թեան նիւթ դարձաւ այդ օրերուն Խորհրդային Միութիւնը կազմող տասնվեց Հանրապետութիւններու առանձնաբար ՄԱԿին անդամակցելու հարցը: Մեծն Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու ընդդիմութեան առջեւ Խորհրդային Միութիւնն «այդ հարցը դրեց ոչ այն ձեւով, ինչպէս այդ արուել է Տումպարտոն-Օքսում, բայց առաջարկեց որ երեք կամ, զոնէ, երկու սովետական Հանրապետութիւններ գտնուեն միջազգային կազմակերպութեան նախաձեռնողներէ թուում (խօսքը վերաբերում էր Ուկրայինային, Բելոռուսիային եւ Լիտվային)»⁽¹⁾: Ի վերջոյ որոշուեցաւ ՄԱԿի սկզբնական անդամ դարձնել բացի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութենէն՝ Ուքրանական եւ Պելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնները, զուրս ձգելով Ռուսական դաշնակցային, Հայկական եւ մնացեալ խորհրդային այլ Հանրապետութիւնները: Իրաւական գետնի վրայ՝ սխալ մըն էր կատարուածը, որովհետեւ ՄԱԿէն ներս ընդունուած երկու Հանրապետութիւնները բազկացուցիչ մասերն էին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան, որ այլապէս ալ, իր կարգին, իբր հիմնադիր անդամ, կ'անդամակցէր ՄԱԿին: Ծիշդ ձեւը պիտի ըլլար ՄԱԿէն ներս ընդունիլ տասնվեց Հանրապետութիւններն ալ եւ անոր Ապահովութեան Խորհուրդէն ներս վեթոյի իրաւունքը վերապահել Խորհրդային Ռուսիոյ եւ կամ ալ՝ ՄԱԿէն ներս ընդունիլ միմիայն ԽՍՀՄը: Մեկնելով հայկական շահերէն՝ անշուշտ որ նպաստաւոր պիտի ըլլար առաջին ձեւը, մանաւանդ երբ նկատի առնուի Կարս-Արտասահնի հարցին վերաբարձուածը 1945-ին:

Եալթայի Խորհրդաժողովին՝ Մեծն Բրիտանիոյ վարչապետ Չըրչիլը ոգի ի բոին աշխատեցաւ ապահովելու համար Թուրքիոյ անդամակցութիւնը ՄԱԿին որպէս հիմնադիր անդամ՝ հակառակ որ այդ վերջինը չէր ամբողջացներ անհրաժեշտ պայմանները, որովհետեւ անիկա ոչ պատերազմիկ երկիր էր Նացի Գերմանիոյ դէմ եւ ոչ ալ ձեւական կերպով պատերազմ յայտարարած Երրորդ Ռայխին դէմ: Եալթայի Խորհրդաժողովի 8 Փետրուարի նիստին Չըրչիլ յայտարարեց թէ «ինքը՝ Չըրչիլը, արտայայտուելու է Թուրքիային հրաւիրելու օգտին, թէպէտ, զուցէ, այդ առաջարկութիւնը չի հանդիպի ընդհանուր հաւանութեան: Թուրքիան Անգլիայի հետ դաշինք էր կնքել գեռեւս նախքան պատերազմը, շատ վտանգաւոր ժամանակ: Երբ պատերազմն սկսուեց, Թուրքերը գտնում էին, որ իրենց բանակը այնքան լաւ սպառազինուած չէ ժամանակակից պատերազմի համար: Այնուամենայնիւ Թուրքիայի դիրքը բարեկամական եւ օգտակար է եղել շատ անսակեպից: Թուրքերը նոյնիսկ անգլիացիներին օգնութիւն էին

առաջարկում, թէպէտ անգլիացիները չօգտուեցին այդ առաջարկութիւնից», եւ ապա՝ «հարկ չկա՞յ արդեօք թուրքերին հնարաւորութիւն տալ՝ զղջալու մահուան մահճում»⁽²⁾։

Ստալին պատասխանեց Զրրչիլին, եթէ մինչեւ Փետրուարի վերջը թուրքիան պատերազմ յայտարարէ Գերմանիոյ դէմ՝ կարելի է դաշն որպէս անդամ հրաւիրել ՄԱԿին⁽³⁾։

Թուրքիան կը վախճար որ Խորհրդային Միութիւնը «կուլ տար» զինք։ Առ այդ՝ խօսելով այս մասին՝ թուրք պատմաբան Քահսին Ունալ կը գրէ թէ «իմանալով Ռուսաստանի քաղաքական այս նպատակը եւ յիշեցումէն ետք մեր բարեկամներ Անգլիոյ եւ Ամերիկայի՝ 1945-ին պատերազմ յայտարարեցինք Գերմանիոյ եւ Ճարմնի դէմ եւ առ այդ պատերազմի մէջ մտանք անոնց դէմ»⁽⁴⁾։ Իրաւ ալ՝ թուրքիա պատերազմի յայտարարութիւնը հրապարակեց 23 Փետրուար 1945-ին, որ ի զօրու պիտի դառնար միայն հինգ օր ետք՝ 28 Փետրուարէն սկսեալ, այսինքն՝ ա՛յն ժամկէտին զոր ճշդած էր Ստալին։ Այս ձեւով էր որ թուրքիան իրաւունք ստացաւ դառնալու ՄԱԿի հիմնադիր անդամ ըլլալու։ Սակայն պէտք չէ մտահան ընել որ պատերազմը շատ էր մօտեցեր իր աւարտին եւ Դաշնակիցները ներխուժեր էին Գերմանիա, եւ առ այդ՝ թուրքիան չէր կրնար ըլլալ իսկական պատերազմի կողմ՝ հակառակ ա՛յլ Դաշնակիցներու կողմնակից ըլլալուն։

Հակառակ վերջին պահուն եւ ստիպողաբար պատերազմ յայտարարելուն՝ նենգափոխելով պատմութիւնը թուրքեր մի՛շտ ալ ջանացին ցոյց տալ, թէ իրենց վարած չէզոք քաղաքականութիւնը մի՛շտ ալ եղաւ ի նպաստ Դաշնակիցներուն։ Այսպէս՝ Քանիկի 3 Մարտ 1945-ի թիւին մէջ Եալչըն կը գրէր, թէ «Թուրքիան շահեցաւ Ռուսիոյ օրինակէն...։ Թուրքիա ձեւացուց թէ բարեկամական կապեր ունէր Գերմանիոյ հետ, բայց մերժեց անոր անցքի ճամբայ տալ դէպի Միջին Արեւելք եւ Կովկաս։ Նոյնիսկ Թեհրանի [1943-ի] ժողովէն ետք Ռուսիան գլխաւոր պատճառն էր որ թուրքիա չմասնակցէր պատերազմին»⁽⁵⁾։

Պատերազմի իսկ ընթացքին բացայայտ էր թէ որո՞ւն ի նպաստ էր թուրքիոյ «չէզոքութիւնը»։ աւելին՝ յետպատերազմեան շրջանին ի յայտ եկած Գերմանիոյ արտաքին գործերու նախարարութեան գաղտնի վաւերաթուղթերը յստակօրէն ցոյց կու տան թուրքեագերման սերտ գործակցութիւնը։ Կը բաւէ նշել, թէ նոյնիսկ որոշուած էր թրքական ներխուժում մը Անդրկովկասի վրայ 1942-ի Նոյեմբերին, երբ, ինչպէս կ'ակնկալուէր, Գերմանիան յայտարարէր անկումը ըՍտալինկրատի, որ բարեբախտաբար տեղի չունեցաւ, որովհետեւ այս վերջինը պիտի նշանակէր բռնազրաւումը Հայաստանին եւ շարունակութիւնը 1915-1921-ի հայկական ցեղասպանութեան։

Մարտ 19, 1945-ին Խորհրդային Միութիւնը շեղեալ Համարեց Խորհրդային եւ Թուրք դաշնագիրը, որ կնքուած էր երկու կողմերու միջեւ Փարիզ՝ 17 Դեկտեմբեր 1925-ին⁽⁶⁾։ Այս դաշնագիրը ոչ-յարձակման եւ չէզոքութեան պայմանագիր մըն էր եւ Խորհրդային-թրքական արձանագրութեան մը ենթարկուեցաւ Անգարայի մէջ 17 Դեկտեմբեր 1929-ին։ Ըստ անոր երկրորդ յօդուածին՝ պայմանաւորուող կողմերը կը պարտադրուէին զիրար տեղեակ պահել այլ պետութիւններու հետ քաղաքական որեւէ պայմանագիր կնքելու մասին եւ շտաբար գրել այդպիսին առանց միւս կողմի համաձայնութեան⁽⁷⁾։ Սակայն Թուրքիա ոչ միայն կը խախտէր սովետներու հետ կնքած իր պայմանագրութիւնը Նացի Գերմանիոյ հետ իր կնքած 18 Յունիս 1941 թուակիր դաշնագիրով՝ այլ կը ծրագրէր նոյնիսկ Խորհրդային Միութեան վրայ կատարուած գերմանական արշաւանքի յաջողութենէն ետք յարձակիլ ԽՍՀՄի վրայ «Իրանական սարահարթի վրայով՝ Բազուի ուղղութեամբ»⁽⁸⁾։ Միւս կողմէ՝ պատերազմի ընթացքին Թուրքերը ի նպաստ Նացի Գերմանիոյ խախտեցին նեղուցներու վերաբերեալ Մոնթրէօյի համաձայնագիրը։ Այսօր, այս բոլորէն ետք, յստակ կը դառնայ, թէ ինչո՞ւ Խորհրդային Միութիւնը պիտի ջնջէր Թուրք-Խորհրդային Դաշնագիրը։

Սակայն Թուրքիան լրիւ շքանդեց կամուրջները եւ հետեւեցաւ խորամանկ ու կեղծաւոր քաղաքականութեան մը, եւ Գերմանիոյ եւ ձարոնի դէմ պատերազմ յայտարարելէն ետք երբ Խորհրդային Միութիւնը պահանջեց որ իրեն վերադարձուին Թուրքիա ապաստանած իր քաղաքացիները՝ անմիջապէս ընդառաջեց պահանջին։ Այսպէ՛ս էր որ, ձարոնի անձնատուութենէն քիչ առաջ, 6 Օգոստոս 1945-ին, Թուրքիա Խորհրդային Միութեան յանձնեց 237 խորհրդային քաղաքացիներ, որոնցմէ 195-ը ատրպէյճանցիներ էին եւ կովկասցի այլ քաղաքացիներ⁽⁹⁾։

2. ՊԵՐԼԻՆԻ ՆԱՑԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՂ ՀԱՅԵՐՈՒՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Գերմաններու կողմէ նշանակուած եւ Ֆերպինտունկշտայ⁽¹⁰⁾ անունով ծանօթ մարմինը որ «Հայկական գործերով» կը զբաղէր 1943-ի վերջերէն ի վեր՝ 1944-ի նոյեմբերին փոխարինուեցաւ նոր մարմինով մը Գերմանիոյ ԷՍ.ԷՍ.-ի եւ Արեւելեան Գրաւեալ Շրջաններու Նախարարութեան կողմէ։ Սակայն խօսքը տանք այդ օրերուն Պերլին հաստատուած Կարօ Գէորգեանին, որուն համաձայն Ֆերպինտունկշտայի «կազմութեան ձեւը... անհամապատասխան ըլլալով Հայկական չահերուն, զանազան դիմումներու եւ միջամտութեանց

չնորհիւ կարելի եղաւ լուծել զայն եւ անմիջապէս փոխարինել մէկ ուրիշ մարմնով, որ կոչուեցաւ այնուհետեւ Հայոց Ազգային Կոմիտէ»⁽¹¹⁾: Իրականութեան մէջ, ըստ գերման ազդիւրներու, Ֆերպինտունկշտապի փոխարինման ուրիշ էին պատճառները եւ հետեւանք՝ ներքին վէճերու, որոնք ծաւալեցան մարմնի գոյութեան վերջին ամիսներուն: Գերման ԷՍ.ԷՍ.-ներու Կեղրոնը կ'առաջարկէր իրեն համագործակից մարմինին վերակազմակերպել կապի կոմիտէն եւ զայն կոչել «Ազգային Կոմիտէ» մինչ այդ արգիլուած եզրով մը, բան մը որուն փոխան ԷՍ.ԷՍ.-ները կ'ակնկալէին որ Ազգային Կոմիտէն ենթարկուէր նացիներուն սերտ գործակից եւ նախկին խորհրդային զօրավար Վլասովի կոմիտէին:

Այս մէկէն անկախ՝ կոմիտէէն ներս վէճեր կային մէկ կողմէ Ալֆրեա Մուրատեանի եւ իր այսպէս կոչուած Արմենական Շարժումին եւ միւս կողմ՝ Արմիկ Զամալեանի միջեւ: Այս վերջինն ունէր նեցուկը ԷՍ.ԷՍ.-ի Կեղրոնին եւ կը յուսար, որ Դրոն եւ անոր ներկայացուցիչները միանային նախատեսուած Ազգային Կոմիտէին: Ըստ ԷՍ.ԷՍ.-ներուն՝ Ալֆրեա Մուրատեանը որ բնիկ գերմանահրապտակ էր՝ «փառասէր եւ անվստահելի» էր: Ժողովի մը աւարտին՝ Դրոն մերժեց ստանձնել նոր ստեղծուելիք մարմինն ատենապետութիւնը եւ դուրս եկաւ իր գործակիցներէն Տիգրան Բաղդասարեանի, այլ կուսակիցներու եւ արմենական որոշ անհատներու հետ: Ի վերջոյ՝ նոր մարմինը կազմուեցաւ 1945-ի Յունուարին եւ անկէ դուրս մնաց Մուրատեանը⁽¹²⁾: Հայոց Ազգային Կոմիտէին կազմը կը բաղկանար Գնդ. Տիգրան Բաղդասարեանէն՝ որ ատենապետն էր մարմինն, Արմիկ Զամալեանէն, Վաչէ Արեղեանէն, Յուլի Յարութիւնեանէն, Յարութիւն Գարասեֆերեանէն, Լեւոն Մարգարեանէն, եւ Հոնիգեր կոչուած գերմանացիէ մը⁽¹³⁾: Առաջին անգամն էր որ գերմանացի մը մաս կը կազմէր հայկական մարմինին, եւ շատ հաւանաբար նշանակուած էր գերման պետութեան կողմէ որ հետեւէր անոր գործունէութեան եւ թերեւս ալ ուղղութիւն տար անոր: Հայոց Ազգային Կոմիտէն գործեց Պերլինի մէջ մինչեւ 15 Ապրիլ 1945, երբ Կարմիր Բանակը հասաւ Պերլինի դուռներուն⁽¹⁴⁾:

Ըստ Կարօ Գէորգեանի՝ Պերլինի Հայոց Ազգային Կոմիտէն «բացառաբար կ'անուեցաւ խորհրդային շրջաններէ փախած եւ օրէ օր ստուարացող տարագիր բազմութեանց փոխադրութեան եւ տեղաւորման, ինչպէս նաեւ մնացեալ ռազմագերիներու փրկութեան հարցերով»⁽¹⁵⁾: Փախստականներն ու տարագիրներն ընդհանրապէս կու գային Անդրկովկասէն, Հիւսիսային Կովկասէն եւ Խրիմէն: Եղաւ ժամանակ մը երբ փախստականներուն թիւն անցաւ երեք հազարը: Պերլինի մէջ բնակարանային դիւրութեանց չգոյութեան եւ աշխատանքի

դժուարութիւններուն պատճառաւ այդ հայերը չէին կրնար մնալ հոն: Ազգային կոմիտէն եւ զայն նախորդող մարմինը կարողացաւ համաձայնիլ գերման պատկան իշխանութեանց հետ այս խմբաւորումները փոխադրելու հարաւային Գերմանիա, ուր տեղուոյն Աշխատանքի Պաշտօնատան⁽¹⁶⁾ կարգադրութեամբ անոնք «կը բաժնուին աշխատելու յարմար զանազան վայրեր»⁽¹⁷⁾: Պերլինի Հայոց Ազգային կոմիտէն 1945-ի Յունուարէն մինչեւ Պերլինի անկումը փախստական, գաղթական եւ նացիներու հետ գործակցած հայերուն համար պատրաստեց անհրաժեշտ փաստաթուղթերը, կատարեց անոնց պարենաբաշխում, եւ կազմակերպեց անոնց փախուստը դէպի Աւստրիա եւ հարաւային Գերմանիա, դէպի որոնց ուղղութեամբ կը յառաջանային ամերիկեան զօրքերը Զօր. Այգընհաուզերի ընդհանուր հրամանատարութեան տակ⁽¹⁸⁾: Այսպէս՝ հայեր կային Հայլպրոն, Քէօնկեն, Ունթերթիւրքհայմ եւ Ռոթվայլ բնակավայրերուն մէջ: Վերջին տեղը ստեղծուած էր Ազգային Գրասենեակ մը, որ կապ էր հաստատած Պերլինի Ազգային կոմիտէին հետ⁽¹⁹⁾:

Սակայն օրերուն հետ բազմացաւ թիւը հայ գաղթականներուն: Գերմանիա հասած շուրջ հինգ հազար հաշուող հայ գաղթականութիւնը տեղաւորուեցաւ Շթուիկարտի եւ մեծ մասով ալ՝ Ռոթվայլի ճամբարներուն մէջ: Այս շրջանին է, որ, ըստ Գաղթականական Մարմնի ներկայացուցիչ Միսաք Թորլաքեանի, երեքէն չորս հարիւր հայեր Յունաստանէն բռնի բերուեցան Գերմանիա եւ զանազան ճամբարներու մէջ զետեղուեցան տարապարհակ աշխատանքի մը, որոնք, սակայն, ազատ արձակուեցան Դրոյի միջամտութեան շնորհիւ⁽²⁰⁾:

Իր օրհասական դրութեան մէջ՝ Երրորդ Ռայխը փորձեց օգտագործել իրեն ենթակայ եղող զինուորական բոլոր համախմբումները եւ ջանաց աւելի եւս միաւորել զանոնք՝ մի՛շտ ալ ակնկալելով որ աւելի արդիւնաւէտ կերպով կրնային օգտագործուիլ անոնք: Զինուորական այս համախմբումներուն մէջ ամէնէն աչքառուն էր Զօր. Վլասովինը, որ 14 Նոյեմբեր 1944-ին հանդէս եկաւ կոչով մը, որ կը հրաւիրէր ազգային բոլոր կոմիտէները համախմբուիլ իր շուրջ եւ պայքարիլ Կարմիր Բանակին դէմ, որուն փոխան կը խոստանար ազգերու իրաւահասարակութիւն եւ ինքնուրոյնութիւն, եւ մինչեւ իսկ՝ Ռուսիայէն անջատուելու իրաւունք՝ նացիներու յաղթանակէն ետք: Այս վերջին կէտը դրուած էր մանաւանդ ներգրաւելու համար կովկասեան խմբաւորումները, թէպէտեւ անձնապէս ինք հակառակ էր այսպիսի իրականութեան մը: Գերման ճնշումներուն տակ, պատերազմի վերջին շրջանին երբ արդէն յաղթանակի ամէն յոյս կորսուած էր գերմաններուն համար՝ կովկասեան զանազան ազգային կոմիտէներ միախմբուեցան կովկասեան Միացեալ կոմիտէ անուան

աակ 17 Մարտ 1945-ին: Անոր մէջ կը գտնուէին Հիւսիսային Կովկասի վտարանդիներէն Ալիխան Գանթեմիրը, Ահմետ Նապի Մազման, Քալմուկ Գատին, Լազար Պեչերախովը, ատրպէյճանցիներէն՝ Ապու Ալի օղլու Ֆաթալի Պէյլին, որ շատ աւելի ծանօթ էր հազարապետ Տուտանկինսքի անունով, եւ Ալեսքեր Ալիբեկովը, վրացիներէն՝ Տոքթ. Մազարովքը, Միխայիլ Քեթիան, Քիվի Քափիւանին, Միխայիլ Ալշիմփայան, իսկ հայերէն՝ Տիգրան Բաղդասարեանը, Արմիկ Զամալեանը, եւ Գնդ. Վ. Սարգսեանը: Ասոնցմէ առաջին երկուքը անդամ էին Պերլինի Հայոց Ազգային Կոմիտէին: Կոմիտէի նախագահութիւնը կազմուած էր Ալիբեկովէն, Զամալեանէն, Քեթիայէն եւ Գանթեմիրէն: Կոմիտէի զինուորական խորհուրդին մաս կը կազմէր Զօր. Պեչերախովը, մարմինն կողմէ Զօրավար յայտարարուած Վ. Սարգսեանը, Հազարապետ Տուտանկինսքին, Հազարապետ Քալմուկ Գատին, եւ Գնդ. Քափիւանին: Այս վերջին մարմինը կազմուեցաւ Աւստրիոյ Շվարցախ կայարանին մէջ⁽²¹⁾:

Կոմիտէի կազմութենէն առաջ, 1945-ի Փետրուարին, Միխայիլ Քեթիան անցաւ Զուիցերիա վրացիներէ կազմուած պատուիրակութեան մը գլուխն անցած, Միջազգային Կարմիր Ուաշին եւ այլ կազմակերպութիւններուն միջոցաւ Դաշնակիցներէն ապահովելու որ խորհրդային իշխանութիւններուն չյանձնէին գերմաններուն ծառայած՝ այլ խորհրդային հպատակութիւն ունեցողները, այլ անոնցմէ միայն զանոնք՝ որոնք իրենք կը փափաքէին: Բայց ձախող դուրս եկաւ առաքելութիւնը⁽²²⁾: Ուստի՝ Կոմիտէի կազմութենէն ետք՝ իբր պատուիրակութիւն Զուիցերիա մեկնեցաւ Արմիկ Զամալեանը, Ալիխան Գանթեմիրը, Միխայիլ Քեթիան եւ Ալիբեկովը խորհրդային նախկին հպատակներուն ապաստան մը ապահովելու մտադրութեամբ: Նոյն շրջանին Զուիցերիա անցնելու փորձ մը կատարեց Վ. Սարգսեանն ալ՝ բայց չյաջողեցաւ⁽²³⁾:

Մայիս 7, 1945-ին Կոմիտէն կապ հաստատեց Շվարցախի ամերիկեան գրաման զօրքերու ընդհանուր պատասխանատուին հետ: Դիմեց նաեւ Սալցպուրկի ամերիկեան գրաման իշխանութիւններուն եւ անոնց ներկայացուց Սիրիոժա Թորոսեանի խմբագրած եւ Մազմանայի, Քալմուկ Գատիի, Սարգսեանի եւ Մամետովի կողմէ ստորագրուած խնդրագիրը, որով խնդրեց անոնցմէ կովկասցիները փոխադրել Վիլնախէն եւ Լիէնցէն ամերիկեան գրաման գօտի եւ զանոնք «փրկել սովեաների ձեռքն ընկնելու սպառնալիքից», որ յաճախ կ'աւարտէր մահապատիժով կամ Սիպերիա արստրով: Ինը հոգիէ բաղկացած այս պատուիրակութիւնը որուն մէջ կը գտնուէր Գնդ. Վ. Սարգսեանը խորհրդային զօրավարի իր համազգեստով՝ Շվարցախէն մեկնեցաւ Սալցպուրկ ամերիկեան զինուորական հսկիչներու ուղե-

կցութեամբ, ուր եւ զանոնք ձերբակալեցին ամերիկեան իշխանութիւնները: Կատարուած ստուգումներէ ետք՝ անոնք ազատ արձակուեցան իբրեւ նախապատերազմեան ընդդիմադիրներ ու տարագիրներ, իսկ Աւստրիոյ խորհրդային իշխանութիւններուն յանձնուեցան Համաշխարհային Երկրորդ Պատերազմի խորհրդային այն ռազմագերիները, որոնք, Վ. Սարգսեանի գլխաւորութեամբ, զործակցած էին նացիներուն հետ⁽²⁴⁾:

1945-ի Փետրուարին գրաւելէ ետք Շթուիկարթը՝ ամերիկեան բանակը Գերմանիոյ տարագիր հայութիւնը ցրուեց Ռոթվալլ, Ունթերթուրքհայմ, Քէօնկեն, Հայլպրոն, Մանհայմ, Միւնիխ, Տրանքֆորթ, Համպուրկ եւ զանազան այլ քաղաքներ⁽²⁵⁾: Նոյն տարուան Ապրիլին, Պերլինի անկման նախօրեակի խուճապային օրերուն, Գերմանիոյ հայ զաղթականներէն մաս մը անցաւ Իտալիա: Ապրիլ 15-ին գործելէ զաղբեցաւ Հայոց Ազգային Կոմիտէն: Պերլինը ձգողներուն մէջ վերջիներէն եղան Սահակ Տէր Թովմասեանը եւ Կոմար՝ Վահան Փափազեանը, որ Իտալիա ապաստանեցաւ Պերլինի գրաւումէն առնելու մը ետք⁽²⁶⁾:

Պատերազմի աւարտին՝ երբ Ռոթվալլ ինկաւ ֆրանսական զբրուաման գօտիին մէջ եւ Կարմիր Բանակն ալ գրաւեց Պերլինը՝ ըմբոստացան Ռոթվալլի ճամբարին հայերը եւ բանտարկել տուին Լեւոն Բեկ Աբրահամեանը, կազմեցին ճամբարի նոր ղեկավարութիւն եւ սկսան արձանագրել հայերը որպէսզի Խորհրդային Միութիւն զրկէին զանոնք. սակայն, լրիւ չյաջողեցան իրենց ծրագրին մէջ, որովհետեւ Խորհրդային Միութիւն կարողացան զրկել մաս մը միայն, մինչ ուրիշներ մեկնեցան Շթուիկարթ⁽²⁷⁾:

Շթուիկարթի ճամբարն ունէր տեղական հայկական իր ղեկավարութիւնը ամերիկեան հսկողութեան տակ: Համագերմանական Ազգային Կոմիտէն կը բաղկանար հինգ հոգիէ՝ նախագահութեամբը Սեդո Ջալալեանի եւ քարտուղարութեամբը Ներսէս Փունտուփեանի: Անոնց հետ էր նաեւ Վաղարշակ Տէր Ստեփանեանը⁽²⁸⁾: Շթուիկարթի մէջ կազմուած էր ու կը գործէր Կովկասեան Ժողովուրդներու Միութիւն մըն ալ, իսկ իւրաքանչիւր կովկասեան ազգութիւն ունէր իր Ազգային Կոմիտէն: Ըստ Թորլաքեանի՝ այս մարմինը «կը տանէր հակապոլշեիկեան պայքար եւ կը հետապնդէր իր արդար դատը՝ ունենալու համար ազատ ու անկախ հայրենիք»⁽²⁹⁾:

Կարմիր Բանակի հայ ռազմագերիներէն ոմանք ձերբակալուեցան պատերազմի աւարտին: Առաջին առիթով իսկ ձերբակալուեցաւ եւ որպէս «հայրենիքի դաւաճան» մահուան դատապարտուեցաւ ու զնդակահարուեցաւ Գնդ. Վ. Սարգսեանը⁽³⁰⁾, որ եղած էր նախագահը Ֆերպինտունկչտապի եւ զործակցած գերմաններուն հետ: Անոր

յաջորդեցին նացիներուն հետ կամովին գործակցած կարգ մը նախկին ռազմագերիներ, որոնք խորհրդային իշխանութեան կողմէ ենթարկուեցան մահապատիժներու եւ պատժական այլ միջոցառումներու: Ստալինեան դաժան կամքով՝ այսպիսիներուն հետ տուժեցին ակամայ գործակցողներ եւ բոլորովին անմեղներ ալ:

Դաշնակիցներու գրաւման գերմանական շորս գօտիներուն՝ խորհրդայինին, անդլիականին եւ ֆրանսականին մէջ գրաւման իշխանութիւններն ստիպեցին Պորհրդային Միութենէն հեռացածները վերադառնալ իրենց երկիրը, իսկ ամերիկեանին մէջ, բացի քանի մը պարագաներէ, չեղաւ անպատճառ վերադառնալու ստիպում⁽³¹⁾: Ընդհակառակը՝ Գերմանական Վեհրմախթի կազմակերպած Հայկական Լեգէոնի մնացորդացը տեղաւորուեցաւ Շթուիկարթի նախկին զօրանոցներուն մէջ, որոնք կը գտնուէին ամերիկեան գրաւման գօտիին մէջ:

Պորհրդային զինուորական իշխանութիւնները կ'ուզէին իրենց սահմաններէն ներս վերադարձնել նախապէս Առանցքի երկիրներու գրաւման ենթարկուած եւ այժմ կարմիր Բանակին կողմէ գրաւուած շրջաններու եւ մանաւանդ Գերմանիա գտնուող եւ Պրիմէն, Հիւսիսային Կովկասէն եւ խորհրդային այլ շրջաններէն հեռացած իր քաղաքացիները, որոնց շարքին նաեւ հայերը, այն մտաւախութեամբ թէ անոնք, որոնք այլապէս ալ հակադրուած էին խորհրդային իշխանութեան, մնալով արտասահման պիտի բացայայտէին Ստալինի ու Բերիայի կիրարկած բռնատիրութիւնը՝ պահել կարենալու համար խորհրդային իրաւակարգը՝ ապա՝ խորհրդային իշխանութիւնը այդ տեսակներէն պահանջեց մանաւանդ զանոնք, որոնք, ըստ իր դատումին, գործեր էին իրեն դէմ, որպէսզի հատուցէր անոնց արդար պատիժը:

3. ԶՕՐ. ԴՐՕ ԿԱՆԱՅԵԱՆ

Համաշխարհային երկրորդ Պատերազմի վերջին շրջանին Զօր-Դրօ Կանայեան շրջան մը գտնուեցաւ նախ Վիեննա, եւ ապա՝ Պերլին: Պատերազմի աւարտէն պահ մը ետք, 1945-ի Հոկտեմբերին, ձերբակալուեցաւ Հայտելպերկի մէջ ամերիկեան գրաւման իշխանութեան կողմէ ու բանտ մնաց մէկ ամիս: Ապա ազատ արձակուեցաւ այն պատճառաբանութեամբ թէ «էին տարադիր է[ր]», այսինքն՝ նախապատերազմեան, կամ նախքան 1921 թուականէն եկող: Արդէն այս նոյն պատճառաբանութեամբ ալ նախապէս ազատ էր արձակուած «Կովկասեան զինուած ուժերու շտապի» պետ Զօր-Պեչերախովը⁽³²⁾:

Համաշխարհային երկրորդ Պատերազմի իսկ ընթացքին, պատերազմի վերջին մէկ տարուան շրջանին, եւ մանաւանդ պատերազ-

լա-

մի աւարտէն ետք լոյս տեսնել սկսան փաստաթուղթեր, նկարներ եւ յօդուածներ Դրոյի եւ Պերլինի Հայոց Ազգային Խորհուրդի եւ Նացի Գերմանիոյ գործակցութեան մասին՝ ամբողջ Հայկական Սփիւռքի տարածքին⁽³³⁾: Նոյն օրերուն՝ Գահիրէի մէջ առիթով մը էօփէն Բարազեան, նկատի առնելով իրենց «բնականոն յարաբերութիւնները», հարց կու տար Տոքթ. Երուանդ Խաթանասեանին, թէ ի՞նչ-թիւնը պատերազմիկ երկու կողմերու միջեւ, այսինքն՝ մինչ Ամերիկայի, Եգիպտոսի մէջ եւ այլուր կը թուէր ըլլալ մեծ տէրութեանց կողքին եւ ուսասէր՝ անդին, Պերլինի մէջ, անիկա ընդառաջ կ'երթար նացիներու հակառուս առաջարկներուն: Տոքթ. Խաթանասեան կը պատասխանէր իր կուսակցութեան կողմէ թէ «ամէն կապ խզուած է այժմ մեր եւ Եւրոպայի մեր պատասխանատու ընկերներուն միջեւ: Անշուշտ սա⁽³⁴⁾ մի «անկարգապահ» գործ է ու մենք կուսակցական դատաստանի պիտի ենթարկենք Դրոն ու ծանր պատիժի ենթարկենք զինքը անմիջապէս որ կարելի ըլլայ»⁽³⁵⁾:

Իր կարգին՝ Բարազեանն իր կողմէ կ'աւելցնէ թէ «պէտք է ընդունիլ որ ան [այսինքն՝ Դրոն] իրապէս դատապարտուած էր Լ. Յ. Դաշնակցութենէն ներս: Բայց 1945-ին, այսինքն տարի մը ետք՝ երբ Յուլիս-Օգոստոսին [Վահան] Նաւասարդեան վերադարձած էր Յուսարիի իր հին պաշտօնին⁽³⁶⁾, այս վերջինը «արդարացուցիչ» խմբազարկաններ սկսաւ հրատարակել Դրոյի մասին՝ տարի մը շարունակ»⁽³⁷⁾, իսկ յետ պատերազմեան սկզբնական շրջանին արդարացնելու համար նացիներու հետ Դրոյի գործակցութիւնը՝ Հայրենիք օրաթերթը կը գրէ, թէ «Դրոն ի՞նչ որ ըրած է՝ ըրած է այն խորունկ համոզումով, թէ այդ կը պահանջէ հայ ժողովրդի շահը եւ այդ կերպով ինքը կրնայ օգտակար ըլլալ իր ցեղակիցներուն: Եւ եթէ Դրոն յանցանք գործած է՝ այդ ըրած է ակամայ «սխալ դատողութեան եւ անտեղեակութեան հետեւանքով»⁽³⁸⁾:

4. ՀԱՅ ՍՓԻՒՌՔԻՆ ԴԻՐՔԸ 1945-Ի ԲԱՆՏՈՐՈՇ ՕՐԵՐՈՒՆ

Խորհրդային Միութեան Ստալինկրատի մէջ տարած յաղթանակէն ետք եւ յատկապէս պատերազմի վերջրս երկու աւարտներուն՝ սփիւռքահայ բոլոր հոսանքներն ալ⁽³⁹⁾ Հայկական Հարցի լուծման բանալին կը տեսնէին Խորհրդային Միութեան մէջ: Հայ քաղաքական մամուլը դրական կերպով կը մօտենար Խորհրդային Միութեան վարած քաղաքականութեան:

Կարգ մը հայ գաղութներու մէջ, յատկապէս Միջին Արեւելեան երկիրներու եւ ի մասնաւորի լիբանանահայ գաղութին՝ կար ազգային համագործակցութիւն մը առկայ կուսակցութիւններուն միջեւ:

սակայն հոն ուր մօտիկ անցեալին բուռն էր եղած միջ-կուսակցական եւ ազգային-եկեղեցական պայքարը՝ ինչպէս էր իրականութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգներու պարագային, ուր եւ երկփեղկուած էր Հայ Առաքելական Համայնքը 1933էն ի վեր՝ անհնար դարձաւ միացեալ ճակատով մը ներկայանայ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան՝ ներկայացնելու համար Հայկական Հարցը: Ամերիկայի մէջ Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան տեղական մասնաճիւղերուն եւ Ամերիկահայ Յառաջդիմական Միութեան միջեւ կայացած համաձայնութեամբ մը 19 Մարտ 1944-ին վերջնական կերպով ձեւ ստացաւ Ամերիկահայ Ազգային Խորհուրդը, թէեւ անոր հիմնադրութիւնը կատարուեցաւ 1943-ի վերջերուն: Անկէ ներս չէր առնուած Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը⁽⁴⁰⁾: Հետեւեալն էր Ամերիկահայ Ազգային Խորհուրդի գործունէութեան ծրագիրը:

«1. Օգնել Ամերիկայի պատերազմական ջանքերուն:

«2. Կազմակերպել ձեռնարկներ եւ օգնել ձեռնարկներու՝ ի նպաստ Սովետական Միութեան եւ Սովետական Հայաստանի:

«3. Պաշտպանել տարագիր Հայերու իրաւունքները հարկ եղած բոլոր միջոցառումներով եւ աշխատիլ ի խնդիր անոնց Հայկական Հողի վրայ վերաբնակեցման:

«Ամերիկահայ Ազգային Խորհուրդը Հայկական իրաւունքներու տէրը կը ճանչնայ Սովետական Հայաստանի կառավարութիւնը»⁽⁴¹⁾:

Ամերիկահայ Ազգային Խորհուրդին նմանակներն ստեղծուեցան Սուրիոյ եւ Լիբանանի, Եգիպտոսի եւ Պաղեստինի, Կիպրոսի եւ Յորդանանի, Իրագի եւ Իրանի մէջ եւ այլուր:

Ապրիլ 13, 1945-ին Անգլիոյ Ծարէյն Օֆիսը երկրի գրաքննութեան սպասարկութեան միջոցաւ ձեռք անցուց մէկ պատճէնը Միմոն Վրացեանի 6 Ապրիլ 1945 թուակիր մէկ նամակին, որ ուղղուած էր լոնտոնաբնակ ժիրայր Միսաքեանին⁽⁴²⁾, եւ ուր Հայաստանի Առաջին Հանրապետութեան վերջին վարչապետը կը յայտնէր թէ Ամերիկայի մէջ կազմուած էր Հայ Ազգային Կոմիտէ մը ոչ-կուսակցական ազգային հիմունքով, թէ նոյնօրինակ մարմին մըն ալ կազմուած էր հակառիւր կուսակցութիւններուն մասնակցութեամբ Ամերիկահայ Ազգային Խորհուրդ անունով, եւ թէ այդ վերջինը կը ղեկավարուէր «այսպէս կոչուած յառաջդիմականներուն» կողմէ: Վրացեան կ'աւելցընէր տակաւին թէ անօգուտ էին եղած միացեալ ճակատ մը կազմելու բոլոր ջանքերը: Աւելին եւ առ ի գիտութիւն «Հայկական Պատուիրակութեան» Լոնտոնի ներկայացուցիչին՝ Վրացեան կը յայտնէր թէ «տեղեկութիւն ստացուած է Գերման Կարմիր Պաշտէն թէ նացիները

բռնութեամբ Գերմանիա տարած են 40.000 հայ աշխատուոր Հիւսիսային Կովկասէն, Պալքաններէն, Փրանսայէն, եւ այլն, եւ որոնք կը գտնուէին թշուառագոյն կացութեան մէջ, եւ թէ օժանդակութիւն կը խնդրուէր անոնց համար»⁽⁴³⁾։

Կ'ենթադրենք թէ նիւթական մեծ օժանդակութեան մը ակնկալութեամբ Գերման Կարմիր Ուաչը չափազանցած է թիւը «բռնութեամբ տարուած աշխատուորներուն»։ Պատերազմի աւարտի խառնաշփոթ այդ օրերուն զժուար էր Գերմանիայէն դուրս գիտնալ ճշգրիտ թիւը «բռնութեամբ տարուած աշխատուորներուն», որոնց մէջ ըլլալու էին նաեւ Հիւսիսային Կովկասէն եւ Ուրիմէն հեռացած հայեր։ Ըստ Սարգիս Աղամեանի տուեալներուն՝ պատերազմի աւարտին կային միայն 3600 հայեր Գերմանիոյ մէջ⁽⁴⁴⁾, իսկ Միսաք Թորլաքեանի տուեալներով՝ լոկ 300-400 հայեր՝ Յունաստանէն։ Պատերազմի վերջին օրերուն, 1945-ի Ապրիլին, Հայաստանէն եկած նախկին ռազմագերիներ, Հիւսիսային Կովկասէն, Ուրիմէն, Յունաստանէն, Փրանսայէն, Պուլկարիայէն եւ Ռումանիայէն յաճախ իրենց ընտանիքներով հեռացած հայեր, ընդամէնը մօտ 1500 հոգի, հաւաքուեր էին Ռոթվալլի մէջ, որ իր չըջակայքով զբաւուած էր Փրանսական ուժերուն կողմէ⁽⁴⁵⁾։

Միացեալ ճակատ մը շկագմուեցաւ Սփիւռքի մէջ եւ յատկապէս՝ Ամերիկահայ գաղութին, եւ առ այդ՝ անջատ յուշագիրներ ներկայացուեցան նորակազմ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան։ Այսպէ՛ս էր որ, 7 Մայիս 1945-ին, իբր Հայաստանի Հանրապետութեան վերջին վարչապետ, Սիմոն Վրացեանը յուշագիր մը ներկայացուց Սան Ֆրանսիսկոյի ՄԱԿի ընդհանուր ժողովին եւ պահանջեց Արեւմտեան Հայաստանի թուրքերուն կողմէ բռնագրաւուած հողերուն կցումը Պորհրդային Հայաստանին։ Նոյնը ըրին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կազմած Հայկական Դատի յանձնախումբը 5 Յուլիս 1945-ին եւ հայկական զանազան խմբաւորումներուն յառաջացուցած Ամերիկահայ Ազգային Պորհուրդը 16 Յուլիս 1945-ին⁽⁴⁶⁾։

5. ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԶՎԵԼԹԻ ՄԱՀԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Ֆրենքլին Ռուզվելթ յանկարծամահ եղաւ 12 Ապրիլ 1945-ին։ Անիկա ծանօթ էր Հայկական Հարցին ու ցեղասպանութեան։ Անցեալին, 6 Յունուար 1923-ին, ամերիկացի կրօնական-քաղաքական 32 այլ անձնաւորութիւններու հետ ստորագրած էր զիմուամագիր մը Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Հարտինկին ուղղուած եւ անկէ պահանջած «յարարեթիւնները չվերահաստատել թուրքիոյ հետ, [եւ]

կամ՝ շթոյլատրել իր քաղաքացիներուն որ ելեւմտական օգնութիւն ընեն թուրքիոյ՝ մինչեւ որ թրքական կառավարութիւնը ճանչնայ հայ ժողովուրդին իրաւունքը ազգային անկախ գոյութեան մը»⁽⁴⁷⁾։ Ռուզվելթ մասնակցած էր Եալթայի խորհրդաժողովին 1945-ի Փետրուարին, սակայն իր մահը պատճառ եղաւ որ իր փոխնախագահը՝ Հերի թրումըն, որ զինք փոխարինած էր իբր նախագահ, ԱՄՆը ներկայացնէ Փոցտամի խորհրդաժողովին, ուր Խորհրդային Միութիւնը ներկայացուց Կարս եւ Արտահանի պահանջը։

Պատերազմի վերջին օրերուն, 6 Մայիս 1945-ին, ԱՄՆի եւ Ֆրանսայի հայութիւնը նշեց յիշատակը Ռուզվելթին եւ Փարիզի Հայոց Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական յատուկ հոգեհանգիստ, որուն, ի միջի այլոց, ներկայ էին ներկայացուցիչները Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան, Փարիզի Խորհրդային եւ Ամերիկեան Դեսպանութիւններուն, եւ Փարիզի ամերիկեան զօրքերու պետին։ Հոգեհանգիստին Ֆրանսերէնով խօսք առաւ ազգային եւ հասարակական գործիչ գրող Արչակ Զօպանեանը, որ ի միջի այլոց ըսաւ, թէ «մեր ժողովուրդը, որ իր բոլոր ուժերով, այս պատերազմի միջոցին, ինչպէս 1914-ի պատերազմի ընթացքին, կռուեցաւ Դաշնակից Ազգերու կողքին կամ չարքերուն մէջ, կը յուսայ որ այս անգամ այս վերջիններուն յաղթանակը իր բարերար արդիւնքներուն մէջ պիտի հաշուէ ազատագրումը նահատակուած հայ նահանգներուն գէթ մէկ մասին եւ անոնց կցումը Երեւանի Հանրապետութեան, ուր մեր հայրենակիցները ուրախութիւնն ունին խորհրդային տէրութիւններու համադաշնակցութեան հովանաւորութեան տակ մեր ազգային կեանքին եւ մեր տոհմային մշակոյթին վերածնութիւնը իրականացնելու։ Մենք կը կարծենք թէ ատիկա պիտի ըլլար լուսագոյն եղանակներէն մին նախագահ Ռուզվելթի յիշատակը պատուելու, ու վստահ ենք որ այդ բարձր արդարութեան արարքը խորապէս պիտի հրճուեցնէր իրաւունքի դատին այդ ազնիւ պաշտպան[ի] հոգին»⁽⁴⁸⁾։

6. ՀԱՅԿԱԿԱՆ ԶՕՐԱՐԱԹԻՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ 1945-ԻՆ

Հազար ինն հարիւր քառասուն հինգի Ապրիլին Կարմիր Բանակը պաշարեց Պերլինը եւ հոն գտնուող մէկ միլիոննոց գերման զօրքը, իսկ 16 Ապրիլին սկսած ճակատամարտն եղաւ ահեղ։ Պերլինի պաշտպանութեան կը մասնակցէին 10,400 հրանօթ եւ ականանետ, 1500 հրասայլ եւ 3300 օդանաւ։ Մարաշխտ ժուրովի Առաջին Պիէլոուսական Ռազմաճակատի զօրքերը եւ Մարաշխտ Քոնիէվի Ուքրանական Առաջին Ռազմաճակատի զօրքերը, ընդհանուրը երկուքու-

կէս միլիոն զինուոր, 6250 հրասայլ, 7500 օդանաւ, եւ պատերազմական այլ տուեալներ՝ գրաւեցին Երրորդ Ռայխի մայրաքաղաքը՝ Պերլինը:

Հայկական զօրքերն ալ ունեցան իրենց կարեւոր դերը Նացի Գերմանիոյ վերջնական ջախջախման եւ Պերլինի անկումին մէջ: Պերլինեան ճակատամարտին Խորհրդային Միութեան ուժերուն հետ մասնակցեցան տասը հայ զօրավարներ եւ 89-րդ Հայկական Թամանեան Հրաձգային Զօրաբաժինը Զօր. Նուէր Սաֆարեանի հրամանատարութեամբ:

Ապրիլ 16-ին 89-րդ Հայկական Թամանեան Հրաձգային Զօրաբաժինն սկսաւ յարձակողական մարտերու Օտերի Ծրանքֆորթի մատուցներուն վրայ: Այլ զօրաբաժիններու հետ համագործակցարար ջախջախելով գերման պաշտպանողական գիծերը՝ 89-րդ Հայկական Թամանեան Հրաձգային Զօրաբաժինը մտաւ Օտերի Ծրանքֆորթ քաղաքը 22 Ապրիլին: Պիէլոուսական Առաջին Ռազմաճակատի հրամանատարութեան հրահանգով 89-րդ Հայկական Թամանեան Հրաձգային Զօրաբաժինը միացաւ Երրորդ Հարուածային Բանակի կազմին եւ մասնակցեցաւ Պերլինի գրաւման արիւնայի կռիւներուն: Ապրիլ 28-ին Հայկական զօրքերն արդէն իսկ կռիւ կը մղէին Պերլինի փողոցներուն մէջ ու կը խրէին դէպի կեդրոնը Գերմանիոյ մայրաքաղաքին: Ապրիլ 29-ին Հազարապետ Գ. Բաղալեանի գումարտակը հասաւ Ռեզիտինշթրասսէ փողոցը: Նոյն երեկոյեան 526-րդ գունդի երկու գումարտակները գրաւեցին Պերլինի ելեկտրամեքենաշինական երկու գործարաններէն մէկը, իսկ զօրաբաժնի միւս հատուածները Հումպոլտշայն պարտէզին մէջ հանդիպեցան զօրաւոր ընդդիմութեան: Գիշերային ուժերն կռիւներէ ետք Հազարապետ Հրանդ Սիմոնեանի գումարտակը գրաւեց պարտէզին մերձակայ երկաթուղագիծը Ապրիլ 30-ին: 400-րդ գունդի եօթներորդ վաշտի հրամանատար Հարիւրապետ Մարտիմ Աւագեանն իր վաշտով գրոհեց Պրունքենշտրասսէի շարունակութիւնը կազմող Պեմշտրասսէ փողոցին վրայ գտնուող եկեղեցունոյն վրայ եւ գրաւեց զայն ու կտրեց գերման կայազօրին կապը գերմանական միւս զօրամասերէն: Նոյն օրուան աւարտին 390-րդ եւ 400-րդ հրաձգային գունդերը գրոհեցին ու գրաւեցին կարեւոր հանգույցը Շուլշտրասսէ եւ Էկգերցիրշտրասսէ փողոցներուն: Նոյն օրը խորհրդային այլ բանակայիններ Խորհրդային Միութեան զօրքը բարձրացուցին Ռայխսթակի գմբեթին վրայ: 89-րդ Հայկական Թամանեան Հրաձգային Զօրաբաժնի հրամանատար Զօր. Նուէր Սաֆարեանի զինուորական վարպետութեան շնորհիւ՝ 2 Մայիսին գրաւուեցաւ Հումպոլտշայնի պարտէզի ամրոցին կայազօրը եւ անձնատուրեղան 5112 գերման զինուոր ու սպայ: Իսկ յաղթանակէն ետք 89-րդ

Հայկական Քամանեան Հրաձգային Զօրաբաժինը Հնչեցուց Հայկական Քոչարին Ռայխսթակին առջեւ: Խորհրդային ուժերու գերագոյն գլխաւոր հրամանատարին 2 Մայիս 1945-ի հրամանագիրն ի միջի այլոց կը հաստատէր թէ «... Պերլինը զբաւելու համար մզուած մարտերում աչքի ընկաւ Բանակի Գեներալ Սոփոյսկու, Գեներալ-գնդապետ Կուզնեցովին, Գեներալ-գնդապետ Չուլկովի, Գեներալ-գնդապետ Բերգարինի... [եւ] Գեներալ-մայոր Սաֆարեանի... զօրքերը»⁽⁴⁹⁾: Պերլինի համար մզուող կռիւներուն աչքառու դարձան օդային ուժերու Մարաջախտ Արմենակ Խանփերեանը, Զօրավարներ Իսահակ Գաապարեանը, Սերկէյ Կարապետեանը, Սերկէյ Գալաշենցը, Իփան Վեքիլեանը, Հմայեակ Բարայեանցը, Գնդապետներ Համազասպ Բարաջանեանը, Նիկոլայ Քուսմանեանը, Սամուէլ Յարութիւնեանը, եւ Խորհրդային Միութեան հերոսներ Սարիբեկ Զիլինկիրեանը, Աշոտ Ասրբեանը, Աշոտ Ամատունին եւ բազմաթիւ այլ մարտիկներ⁽⁵⁰⁾:

Պերլինի համար մզուող ճակատամարտին իր մեծ դերն ունեցաւ Գնդի Հրամանատար Համազասպ Բարաջանեանի գլխաւորած զօրամիւտորումը, որ մաս կը կազմէր Զօր. ժուքովի հրասայլային բանակին: Չորս հարիւր քիլոմեթրի յառաջընթացէ մը ետք՝ գալով Արեւելեան Փոմերանիայէն՝ անիկա ի յայտ եկաւ ռազմաճակատի զործողութիւններու գօտիին մէջ: Ապրիլ 30-ին սկսան ահեղ կռիւները Պերլինի մէջ: Գնդուգն քայլ մը առնելով՝ Գնդ. Բարաջանեան իր յարձակումը յառաջ տարաւ թէ՛ ցամաքի վրայով եւ թէ՛ ալ ստորգետնեայ փապուղիովը գետնուղիին: Հիթլեր հրահանգեց բանալ ջրարգելները Շպրէէ գետին, եւ ջուրը խուժեց Պերլինի փապուղիներէն ներս, ուր սպաստաններ էին կիներ, մանուկներ, եւ խորհրդային բանակայիններ. այդ վերջիններուն հետ էին նաեւ Բարաջանեանի ռազմիկները, որոնցմէ ոմանք վտանգելով իրենց կեանքը՝ փրկեցին բազմաթիւ կիներ ու մանուկներ: Պերլինի զբաւումէն ետք Գնդ. Համազասպ Բարաջանեանի հրասայլային միւտորումն ստացաւ «Պերլինեան» անուանումը որպէս աչքի ինկած զօրամիւտորում, իսկ քանի մը օր ետք ալ գնդապետին շնորհուեցաւ զօրավարի կոչում⁽⁵¹⁾:

Պատերազմի վերջին օրերուն, խորհրդային բանակներու Պերլինի պաշարումէն ետք, Պերլինի կեդրոնը գտնուող օդակայանը մնաց փախուստի միակ ճամբան յատկապէս դէպի Շլեզվիթ-Հոլշթայնի շրջանը: Օդուժի Մարաջախտ Ս. Ռուտեկոն, Զօր. Ա. Սենատորովն եւ բանակի շտապի պետ Զօր. Պ. Բրակոն որոշեցին հետախուզել ճշգրիտ վայրը օդակայանին եւ ապա ռմբակոծել ու գրոհել դայն: Այդ գործը կատարողներուն մէջ հիմնականը մնաց Վազգէն Յովհաննէսեանը, որ արդէն իսկ կատարեք էր աւելի քան երեք հարիւր մարտական թռիչք, մղեք վաթսուսէ աւելի օդային մարտ եւ խորտակեք երկու

տասնեակէ աւելի թշնամի օդանաւ: Յաճէն կատարուող թռիչքներով՝ լուսածիր գնդակ տեղացուց նպատակակէտին վրայ, եւ առ այդ՝ անգործածելի դարձաւ օդակայանը: Կատարուածին արդիւնքները տեսնելէ ետք՝ վերաւորուեցաւ, սակայն յաջողեցաւ կատարել ապահով վայրէջքը: Հռչակուեցաւ Սորհրդային Միութեան Հերոս⁽⁵²⁾:

Պերլին ինկաւ Չ Մայիսին: Հիթլերն ու վերջին պահուն անոր օրինական կինը դարձած էլմա Պրաուն Հիթլերը դարձան անձնասպան 30 Ապրիլին, նոյնպէս՝ Կէօպելս եւ իր ընտանիքը: Նախքան իր անձնասպանութիւնը՝ իր յաջորդութենէն զրկեց Լուֆթվաֆէի պետը եւ իր նշանակեալ յաջորդը՝ Կէօրինկը՝ զայն դաւաճան յայտարարելով, եւ իբր նոր Ֆրէշեր⁽⁵³⁾ նշանակեց Մովակալ Տենիցը:

Պերլինի անկումէն ետք՝ 89-րդ Հայկական Թամանեան Հրաձգային Զօրաբաժինը հրահանգ ստացաւ շարժիլ դէպի արեւմուտք այլ զօրամասերու հետ: Առ այդ՝ անիկա շարունակեց իր յաղթական երթը եւ 8 Մայիս 1945-ին հասաւ Էլպա գետը, ուր հանդիպեցաւ ամերիկեան զօրամասերուն եւ ուր 9 Մայիսին Վիթենպերկ քաղաքէն կ'իմանար լուրը պատերազմի յաղթական աւարտին՝ հեռու իր մարտական դիրքերուն մէջ:

Արդարօրէն գնահատուեցաւ Հայկական Զօրասիւնը եւ եօթը հազար սպաներ ու զինուորներ արժանացան շքանշանի: Հայկական Զօրասիւնը փճացուցեր էր ինը հազար գերման զինուոր եւ վերցուցեր՝ տասնմէկ հազար ռազմագերի:

Մայիս 8, 1945-ին Գերմանիոյ Ռէյմս քաղաքին մէջ Զօր-Ալֆրետ Ետտլ ստորագրեց Գերմանիոյ առանց պայմանի անձնատուութիւնը, որ յաջորդ օրը, 9 Մայիսին, վաւերացուեցաւ Պերլինի մէջ:

Յաղթանակի օրուան՝ 9 Մայիսին յաջորդող օրերէն կու գան հայերէնով կատարուած ռազմաթիւ արձանագրութիւններ, զորոնք գերման Ռայխսֆալկին⁽⁵⁴⁾ վրայ ձգեր էին հայ կարմիր բանակայինները: Ըստ անոնց՝ «Ես, Գարեգին Պօղոսեանս, ծնուել եմ Վասպուրականում, իսկ հիմա կուուելով հասել եմ Բեռլին: Այստեղ է եղել մեր սիրելի Պրիմեան Հայրիկը 1878 թուականին, երբ դրուեց Հայկական Հարցը ոչ թէ հայերին ազատութիւն տալու՝ այլ հայերին բնաջնջելու համար: Այդ էին պահանջում այս աւազակ Հիտլերի նախնիները՝ Վիլհելմն ու Բիսմարկը»⁽⁵⁵⁾:

«Ես, սերժանտ Իսահակ Մելիքեանս, զարարաղցի հայ եմ, մեր լեռները անառիկ են, Բեռլինի նման չեն: Մեր լեռները շատ են սպատակուել, բայց մենք պաշտպանել ենք: Ես քաջաբար եմ կուուել, մօրս ասածը կատարել, այսօր նամակ գրեցի, որ ես Բեռլինում եմ: 10 Մայիս 1945 թ.»:

«Ես՝ կապիտան Մուշեղ Ղուլիշեանս, ծնուել եմ Սասունում, Արեւմտեան Հայաստանի ծաղկաւէտ լեռների զաւակն եմ, ընտանիքով ապրում եմ Թրիխսիում, վիրաւորուել եմ երկու անգամ այս Փաշխա աւազակների գնդակներից: Ունեմ 3 աղայ, 2 աղջիկ: Մերացած մայրս ինձ ասել է, որ գերմանացիք գէնք տուն թուրքերին, որ հայերին կոտորեն: Այս Փաշխասները ի՞նչքան պէտք է ապրին: 10 Մայիս 1945 թ.»:

«Գերմանական Վիլհելմ կայսրը եւ Բիսմարկը 1878 թուականին յայտարարեցին. — Հայերին պէտք է ոչնչացնել, թողնել միայն մի հայ, որպէս նմոյշ պատմական թանգարանին համար...: Սակայն, դուք՝ անիծուած ցեղասպան ճիւղներ, չհասաք Երեւան, իսկ ես՝ Գվարտիայի ինժեներ⁽⁵⁶⁾, Գնդապետ Արիստակէս Սահրատեանս, Արարատեան Դաշտի մեր հնադարեան մայրաքաղաք Արտաշատից եմ եկել եւ այսօր ձեր ոճիրների որջ Բեռլինումն եմ՝ Ռայխստագում: Հայերի թիւը աշխարհում աւելի քան 5 միլիոն է եւ ոչ թէ մէկ հայ, ինչպէս դուք էիք ցանկանում: Մենք՝ հայերս եղել ենք, կանք եւ մեր գործերով կը մնանք եւ երկրագնդի գիտութեան ու կուլտուրայի⁽⁵⁷⁾ զարգացման համար մեր լուծան կը մտցնենք: Թող յաւիտենական խաղաղութիւն լինի երկրագնդի վրայ, թող երջանիկ լինեն ու եղբայրարար ապրեն մեր գալիք սերունդները ամէն մի ժողովուրդ իր պատմական հայրենիքում՝ իրենց նախնիների սրբազան հողի վրայ»:

«Ես՝ Գեղամ Բարայեանս, հայ եմ, կոտորելով հիտլերական Փաշխատներին՝ հասայ Բեռլին. թող իմանան մեր թշնամիները»:

«Ես՝ գանդեգուրցի Երուանդ Այվազեանն եմ. մեր հայրենիքից մի կտոր պղինձ եմ բերել, որ հալէի ու Հիտլերի կոկորդը լցնէի. բայց ասում են, որ նա թոյն է խմել»:

7. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆՈՐ ՊԱՏԵԶՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին Ս. էջմիածինի պահած դրական դիրքը Խորհրդային Միութեան հանդէպ մեծապէս գնահատուեցաւ վարչապետ Ստալինի կողմէ, որ 19 Ապրիլ 1945-ին Քրեմլինի մէջ տեսակցելով Կաթողիկոսական Տեղապահ Գէորգ Արք. Զէօրէքճեանի հետ անոր խոստացաւ տալ անհրաժեշտ դիւրութիւնները կաթողիկոսական յառաջիկայ ընտրութիւններու առընչութեամբ⁽⁵⁸⁾: Ընտրական Ազգային-Եկեղեցական Ժողովը կայացաւ 16-26 Յունիս 1945-ի ընթացքին եւ որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Զ.-ն ընտրեց Կաթողիկոսական Ընդհանրական Աթոռին Տեղապահը: Նոյն օրը, զուգադիպօրէն կամ նպատակաւոր կերպով, Անգարայի մօտ խորհրդային զեսպան Վինոկրատով Խորհրդային Միութեան պա-

հանջները ներկայացուց թրքական իշխանութիւններուն: Դեսպանը հաղորդեց Թուրքիոյ թէ Խորհրդային Միութիւնը պատրաստ էր բարեկամական նոր դաշինք մը կնքելու Թուրքիոյ հետ եթէ անիկա Խորհրդային Միութեան վերադարձնէր Կարսի եւ Արտահանի նահանգները, որոնք կը պատկանէին Խորհրդային Հայաստանին եւ Խորհրդային Վրաստանին՝ յաջորդաբար, եւ եթէ վերատեսութեան ենթարկելով Մոնթրէօյի Համաձայնագիրը նեղուցներու հարցին շուրջ՝ գոհացնէր խորհրդային պահանջները⁽⁵⁹⁾: Իրականութեան մէջ՝ նոր չէր պահանջը, որովհետեւ երբ Անգարայէն Մոսկուա վերադարձաւ թրքական դեսպան Սելիմ Սարփերը եւ 7 Յունիս 1945-ին տեսակցեցաւ Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարար Մոլոթովին հետ՝ այդ պահանջները ներկայացուեր էին անոր եւ Մոլոթով անոր յանձնած Կարս ու Արտահանի վերաբերող պահանջագիրը⁽⁶⁰⁾: Ըստ թրքական աղբիւրներու՝ Սելիմ Սարփերը հարց էր տուեր այն ատեն թէ «Խորհրդայինները Կարսի եւ Արտահանի նման աննշան հողամասի մը եւ հոն ապրող փոքրաթիւ բնակչութեան պէտք ունի՞նք արդեօք», որուն ի պատասխան՝ ըսած էր Մոլոթով, թէ «Մեծ Ռուսիան, իրականութեան մէջ, նման պահանջ մը չունի: Սակայն Հայաստանը պէտք ունի»⁽⁶¹⁾: Նոյնհետայն, ինչպէս Թուրքերը, նոյնպէս նաեւ անոնց բարեկամներն իրար անցան խորհրդային պահանջներէն ետք:

Պատերազմի յաղթական Դաշնակիցներու Փոցտամի Համաժողովը, որ եղաւ զազաթի վերջին ժողովը Համաշխարհային երկրորդ Պատերազմին՝ կայացաւ 17 Յուլիս-2 Օգոստոս 1945-ի միջեւ, եւ որուն մասնակցեցան Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Հերի Թրումընը, Մեծն Բրիտանիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլը, եւ Խորհրդային Միութեան ղեկավար Մտալինը: Ժողովի կէսին Չըրչիլ փոխարինուեցաւ նոր վարչապետ Քլեմընթ Էթլիոփ, որ Անգլիոյ երեսփոխանական ընտրութիւններուն տիրացած էր աթոռներու մեծամասնութեան եւ որպէս վարչապետ փոխարինած Չըրչիլը: Նախքան պաշտօնական նիստերը, ինչպէս ցոյց կու տայ պահուած մասնաւոր ատենագրութիւնը, 16 Յուլիս 1945-ին զրոյց մը տեղի ունեցաւ Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարար Մոլոթովի եւ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Էնթընի Իտընի միջեւ: Խօսակցութեան ընթացքին Մոլոթով ուզեց դիտնալ Իտընի դիրքը Թուրքիոյ վերաբերող հարցերու մասին: Եւ անգլիացի նախարարը յայտնեց թէ Թուրք դիւանագէտներ հասեր էին Լոնտոն եւ իրեն խօսած Մոսկուայի հետ իրենց յարաբերութիւններուն շուրջ: Առ այդ՝ Մոլոթով յայտնեց թէ կը յուսար որ Իտըն ունէր ճշգրիտ պատկերացումը կատարուած Թուրք-խորհրդային բանակցութիւններուն եւ թէ «1921 թուականին Թուրքերը օգտուեցան այն իրողութենէն, որ Խոր-

Հըրդային Միութիւնը թոյլ էր եւ խլեցին Խորհրդային Հայաստանի մէկ մասը: Խորհրդային Հայաստանի հայերը վիրաւորուած կը զգան: Այդ հանգամանքները նկատի ունենալով՝ խորհրդային կառավարութիւնը հարց յարուցաներ է օրինական եղանակով վերադարձնել Խորհրդային Միութեան պատկանող հողամասերը»: Իտըն յայտնեց թէ իրենք «ասկէ առաջ երբեք յաժ չեն Խորհրդային Միութեան Թուրքիայէն ունեցած հողային պահանջներուն մասին»: Մոլոթով պատասխանեց թէ իրենք այս հարցը դրին, որովհետեւ թուրքերն առաջարկեցին դաշինք մը կնքել Մոսկուայի հետ: Որպէս պատասխան՝ Իտըն հաղորդեց թէ Թուրքիա պատրաստ չէր զոհացնելու Խորհրդային Միութեան պահանջները, որուն ի պատասխան Մոլոթով հաստատեց թէ «այն հողամասերը, որոնց մասին ինք կը խօսի, թուրքերուն չեն պատկանիր: Թուրքերը անարդար վարուեցան, երբ այդ հողերը խլեցին խորհրդային երկրէն»: Ապա Մոլոթով աւելցուց թէ, ինք յայտնած էր թուրքերուն թէ 1921-ին լեհերն ալ անարդար կերպով խլեցին խորհրդային որոշ հողամասեր, սակայն յետոյ յօժարեցան վերադարձնել զանոնք: Իտըն պատասխանեց թէ Թուրքիոյ մէջ չկար Քըրզընի գիծ: Մոլոթով յարեց թէ անցեալին բրիտանական կառավարութիւնը հանդէս էր եկած պաշտպանելու հայ բնակչութիւնը, որ կը գտնուէր թուրքերու գերիշխանութեան տակ՝ եւ թէ վերջերս այս հարցին մէջ հայերու պաշտպանութեամբ հանդէս էր եկած Դոկտ. Հիւլիէթ ձանսընը⁽⁶²⁾, Քենթըրպըրիի Աւագերէցը, որ ներկայ էր գրտնուած էջմիածնի Ազգային-Նկեղեցական ժողովին եւ 29 Յունիսին յայտարարած թէ Թուրքիան պէտք է որ վերադարձնէ իրեն կցուած հայկական հողերը»⁽⁶³⁾: Անոր վրայ՝ հակառակ որ Իտըն լուստեղեակ էր հայկական Զարդերուն եւ տեղահանութեան՝ հարց տուաւ Մոլոթովի թէ «չառ հայեր կ'ապրէի՞ն Թուրքիոյ մէջ»: Մոլոթով պատասխանեց թէ կային 400-500 հազար հայեր Թուրքիոյ մէջ, Խորհրդային Հայաստանի մէջ կ'ապրէին մօտ մէկ միլիոն հայեր, իսկ Խորհրդային Հայաստանէն դուրս՝ սփիւռքի մէջ մօտ մէկ միլիոն: Եթէ ընդարձակուէր Խորհրդային Հայաստանի հողամասը՝ արտասահման ապրող բազմաթիւ հայեր պիտի ձգտէին վերադառնալ հայրենիք: Հայերը շատ ընդունակ եւ եռանդուն մարդիկ էին՝ յատկապէս տնտեսական հարցերու մէջ: Թող թուրքերը Խորհրդային Միութեան յանձնէին հայերուն հողը՝ այդ կ'ըլլար արդարացի»⁽⁶⁴⁾:

Հոս վերջ գտաւ տեսակցութիւնը, որուն համար շնորհակալ մնաց Իտըն:

Փոստամի Խորհրդաժողովի 22 Յուլիսի նիստին Ստալին, Զըրչիլ եւ Թրումըն քննեցին Խորհրդային Միութեան հողային պահանջները Թուրքիայէն: Այդ նիստի ընթացքին Զըրչիլ Ստալինի ու-

շաղրութեան յանձնեց այն հանգամանքը թէ «պէտք չէ վախեցնել թուրքիան», եւ աւելցուց տակաւին թէ «Թուրքիան խիստ անհանդարտացած է պուլկարական եւ խորհրդային զօրքերու կեդրոնացումով Պուլկարիոյ մէջ, ինչպէս նաեւ խորհրդային մամուլի եւ ձայնասփռուի թուրքիոյ վրայ շարունակուող յարձակումներէն՝ ի հարկէ այն սգիով՝ ինչ որ դրսեւորուած է Մոլոթովի եւ ԽՍՀՄ-ի թրքական դեսպանի միջեւ՝ Մոսկուայի մէջ տեղի ունեցած բանակցութիւններու ընթացքին: Այդ բանակցութիւններու ատեն յիշուեր է թուրքիոյ արեւելեան սահմաններու փոփոխութիւնը, ինչպէս նաեւ՝ նեղուցներու մէջ խորհրդային յենակէտեր ունենալու հարցը»: Չբրչիլ կղրափակեց իր խօսքը հարց տալով թէ ի՞նչ էր տեսակէտը խորհրդային կառավարութեան:

Ստալինն ուղեց որ պատասխանէր արտաքին գործոց նախարար Մոլոթովը ի՛նք: «Ես հիմա կը ներկայացնեմ ռուսերէն եւ անգլերէն փաստաթուղթ»՝ սկսաւ խօսիլ Մոլոթով, եւ շարունակեց ապա թէ «բայց մինչ այդ կ'ուզէի բացատրել, թէ ի՞նչպէս ծագեցաւ հարցը: Թրքական կառավարութիւնն ի՛նք նախաձեռնարկ եղաւ եւ խորհրդային կառավարութեան առաջարկեց դաշինք կնքել: . . . Դաշինք կնքելու համար Թուրքիոյ բրած առաջարկին մեր պատասխանն եղաւ այն թէ խորհրդային կառավարութիւնը չ'առաջարկեր կնքել այդպիսի դաշինք մը՝ բացի որոշ պայմաններով: Ես իմ կողմէս մատնանշեցի թէ դաշինք կնքելու ատեն պէտք է որ կարգադրենք մեր պահանջներուն խնդիրը: Մեր կողմէ առաջարկուեցան երկու հարցեր, որոնք պէտք էր որ կարգադրուէին: Դաշնագրային պայմանագիր կնքել՝ կը նշանակէ որ պէտք է որ նոյն ատեն պաշտպանենք մեր սահմանները . . . : Սակայն մենք կը գտնենք որ Թուրքիոյ սահմաններն անարդար են որոշ մասերու վրայ: Իրականութեան մէջ՝ 1921 թուականին Խորհրդային Հայաստանէն եւ Խորհրդային Վրաստանէն անջատուեր են Հոգամասեր, որոնք հանրաժանօթ Կարսի, Արդուինի եւ Արտահանի մարզերն են: Ահա՛ Թուրքիոյ խլած Հոգամասերուն քարտէսը [կը բաժնէ քարտէսէն օրինակներ]: Ահա թէ ինչո՞ւ ես յայտարարեցի թէ դաշնագրային պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է կարգադրել Հայաստանէն եւ Վրաստանէն խլուած Հոգամասերուն հարցը՝ այդ Հոգամասերը վերադարձնելով իրենց տէրերուն»⁽⁶⁵⁾:

Մոլոթովի նշած երկրորդ հարցը կը վերաբերէր նեղուցներուն: Յաջորդ օրը, Յուլիս 23-ին, կրկին քննարկուեցաւ հարցը, եւ Չբրչիլ հանդէս եկաւ Թուրքիոյ պաշտպանի դերով եւ յայտնեց թէ «Թուրքերը չեն կրնար համաձայնիլ նեղուցներուն մէջ խորհրդային յենակէտ ստեղծելու [հարցին], իսկ վերատեսութիւն Թուրքիոյ արեւելեան սահմաններու՝ նոյնպէս կարելի չէ թոյլ տալ»⁽⁶⁶⁾: Առ այդ՝

Մտային բացատրեց Խորհրդային Միութեան դիրքը, որուն մասին կը խօսի Թրուսընն իր Յուշերուն մէջ: Ըստ անոր՝ «Մտային աւելցուց, թէ Թուրքերուն վախը կը ծնէր ճշգումէն այն սահմաններուն, որոնք գոյութիւն ունէին ցարական կառավարութեան օրերուն: Մտային յայտարարեց թէ ինք նկատի ունէր Կարսը՝ որ նախապէս մաս կը կազմէր Հայաստանին, եւ Արտասանը՝ որ նախապէս ենթակայ էր Վրաստանին, եւ շեշտեց թէ սահմաններու վերասրբագրման հարցը երբեք հրապարակ չէր բերուեր՝ եթէ Թուրքերը թելադրած չըլլային Ռուսիոյ (այսինքն՝ Խորհրդային Միութեան) հետ զինակցութիւն մը կնքել: Զինակցութիւն մը կը նշանակէր որ երկու երկիրները պիտի պաշտպանէին իրարու միջեւ եղող սահմանները, եւ, ուսական կարծիքով, սահմանները ճիշդ չէին յիշեալ շրջաններուն մէջ, եւ թէ իրենք ըսած էին Թուրքերուն թէ պէտք էր որ բարեփոխուէին անոնք զաշնագրութեան մը պարագային: Եթէ Թուրքերուն կողմէ ընդունելի չէին ասոնք, ըսու անիկա, իրենք պիտի լքէին զաշնագրութեան մը խնդիրը: [Ապա] ինք պիտի ուզէր զիտնալ թէ վախնալիք ի՞նչ բան կար ասոր մէջ»⁽⁶⁷⁾:

Իրաւ ալ ահուզողի էին մատնուած Թուրքերը: Արդարեւ՝ Թուրք բանակի հրամանատար Զօր. Քեազիմ Օրպէյ՝ Սեպտեմբեր 1945-ին Մոսկուայի մէջ կայացած հանդիպման մը ընթացքին յայտնեց Մուկուայի մօտ Բրիտանական Դեսպանատան զինուորական կցորդ Զօր. Արնըլտի թէ երեք ամիս առաջ խորհրդայինները պատրաստ էին արեւելեան սահմաններուն վրայ՝ արշաւելու համար Կարսի եւ Արտասանի վրայ եւ կատարուած իրողութեան մը առջեւ դնելու զիրենք: Սակայն Զօր. Արնըլտ յայտնեց թէ ինք նոյն կարծիքէն չէր, ու չէր հաւատար թէ ճիշդ էր իրեն ըսուածը, թէպէտեւ որոշ չափով անբնական թիւով խորհրդային զինուորներ կային Կովկասի մէջ⁽⁶⁸⁾:

8. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Փոցտամի ժողովէն շարաթ մը ետք, 9 Օգոստոս 1945-ին, Խորհրդային Միութիւնը պատերազմի ձեռնարկեց Կայսերական Ճարոնի դէմ, եւ կարճ ժամանակի մը ընթացքին խորհրդային ուժերը Զախջախջանքին ճարոնական Քվանդունեան Բանակին զօրամասերը, ու ճարոնական լուծէն ազատեցին Մանչուրիան, Հիւսիսային Քորէան, Հարաւային Սախալինը եւ գրաւեցին Քուրիլեան կղզիները: Հո՛ւ եւս մղուող կռիւներուն մասնակցեցան հայեր, որոնցմէ այսօր կարելի է յիշել Տեղակալ Միքայէլ Բարսեղովը, Օղանաւային Ուժերու Մա-

բաջախտ Սերկէյ Խուդեակովը⁽⁶⁹⁾, զօրավարներ Անդրանիկ Ղազար-
եանը, Գէորգ Չալխախեանը, Հայկ Թումանեանը, Գնդապետ Խաչիկ
Սարգիսեանը, բազմաթիւ ուրիշներ: Ամերիկայի կողմէ հիւլէական
երկու ռումբերու արձակումէն ետք Հիրոշիմայի եւ Նակագաթի վը-
րայ՝ 2 Սեպտեմբեր 1945-ին վերջ գտաւ Համաշխարհային Երկրորդ
Պատերազմը ձաբոնի անձնատուութեամբ:

Պատերազմն արժեր էր վաթսուն միլիոն մարդու կեանք:

Համաշխարհային Երկրորդ Պատերազմը շա՛տ սուղ արժեց հա-
յուիթեան, մանաւանդ անոր հայրենարնակ հատուածին: Պատերազ-
մական մարտերուն մասնակցող կէս միլիոնէ աւելի հայ սպաներէն
եւ գինուորներէն զոհուեցաւ մօտաւորապէս կէսը: Թիւով փոքր ժո-
ղովուրդի մը համար շատ մեծ զոհողութիւն մըն էր այս մէկը: Այժմ՝
զոհուածներուն յիշատակին կանգնած կան հարիւրաւոր յուշարձան-
ներ Մայր Հայրենիքի թէ անոնց կուսած երկիրներուն մէջ⁽⁷⁰⁾: Իրաւ
է, որ Նացի Գերմանիոյ զօրքերը չհասան Խորհրդային Հայաստան
եւ Ստալինկրատի մէջ Կարմիր Բանակի տարած յաղթանակը շարտօ-
նեց որ Թուրքիան ասպատակէր Խորհրդային Հայաստանը, եւ այդ
ձեւով փրկուեցաւ հայրենարնակ հայութիւնը, այսուհանդերձ չիրա-
կանացան հայուիթեան յոյսերը, որպէս պատերազմիկ կողմ, Խոր-
հրդային Հայաստանին կցուած տեսնելու գոնէ մինչեւ 1914-ի ռուս-
թրքական սահմանը կազմող հայապատկան հողերը:

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Թեհրան, Եալթա, Պոստղամ (փաստաթղթերի ժողովածու), [Է. Է. Մարտի-
րոսեան, խմբ.], Երեւան, 1970, էջ 126:
2. Նոյն, էջ 137:
3. Նոյն:
4. Tahsin Unal 1700den 1958e Kadar Türk Siyasi Tarih, Ankara, 1958, s. 291.
5. **Tanin**, 3 mart 1945.
6. **Keesing's Contemporary Archive** (1946-1948), p. 7737a.
7. Ռ. Սահակեան, *Սովետա-թուրքական Յարաբերութիւնների Պատմութեան
Հակադիտական Լուսարանումը Ժամանակակից Թուրք Պատմագրութեան
մէջ*, Երեւան, 1964, էջ 89:
8. Նոյն, էջ 96:
9. Charles Warren Hostler, **Turkism and the Soviets**, London, 1957, p. 186.
10. Verbindungstab.
11. Կարօ Գեորգեան, *Ամէնուն Տարեգիրքը*, Պէյրուս, 1954, էջ 139:

12. Patrik von Zur Mühlen, *Zwischen Hakenkreuz und Sovjetstern*, Dusseldorf, 1971, s. 117 (Մեր շնորհակալութիւնները Հայկազեան Գոյէնի նախկին դասախօսուի Դոկտ. Ինկրիտ Սրմանին, որ մեզի համար կատարեց գերմաներէնէ անգլիերէն թարգմանութիւնը հատուածին):
13. Գեորգեան, էջ 139: Տես նաեւ՝ Միսաէ Թորլաֆեան, *Օրերուս Հեռ*, Պէյրուս, 1963, էջ 572: Գեորգեանն ու Թորլաֆեանը չեն տար լրի կազմը մարմնին, որուն համար տես՝ Ռ. Մարտիրոսեան, *Դաշնակցութեան Հակաժողովրդական Գործունէութիւնը Երկրորդ Համաշխարհային Պատերազմի Տարիներին*, Երեւան, 1984, էջ 78:
14. Գեորգեան, էջ 139, եւ Թորլաֆեան, էջ 572:
15. Գեորգեան, էջ 139:
16. Arbeitstamt:
17. Գեորգեան, էջ 139:
18. *Հայրենիք Ամսագիր*, թիւ 5, Պոսթըն, 1965, էջ 2:
19. Գեորգեան, էջ 141:
20. Թորլաֆեան, էջ 541-542:
21. Մարտիրոսեան, էջ 78-79:
22. Von Zur Mühlen, s. 226.
23. Մարտիրոսեան, էջ 79:
24. Լ. Սիմոնեան, *Սփիւռքահայութեան Սոցիալ-Քաղաքական Պայքարի Ուղիներու*, Երեւան, 1968, էջ 444-445:
25. Թորլաֆեան, էջ 547:
26. Նոյն, էջ 575:
27. Նոյն, էջ 541:
28. Նոյն, էջ 555:
29. Նոյն, էջ 556:
30. Von Zur Mühlen, s. 227.
31. Թորլաֆեան, էջ 547:
32. Նոյն, էջ 545: Տես նաեւ՝ *Հայրենիք Ամսագիր*, թիւ 2, Պոսթըն, 1965, էջ 57, եւ Yves Ternon, *La Cause Arménienne*, Paris, 1983, p. 276, ft. 53.
33. Քանի մը օրինակի համար տես՝ *Արարատ* (օրաթերթ), Պէյրուս, 13 Յունիս 1945, եւ *The Armenian Mirror-Spectator*, Boston, September 1, 1945:
34. Կակնարկուի Դրոյի նացիներու հետ ունեցած գործակցութեան:
35. Է. Բարազեան, *Ինքնակենսագրութիւն եւ Յուշեր*, Գահիրէ, 1960, էջ 67: Իր ընդհանուր գիծերուն մէջ նոյնը կը հաստատէ նաեւ Տեփոյեանը: Տես՝ Պետրոս Տեփոյեան, *Նիւթեր Պատմութեան Համար — Մեր Առաքելութեան Ճամբով*, Պէյրուս, 1988, էջ 126-127:
36. Վահան Նաւասարդեան նախապէս իմրագրապետն էր Գահիրէի *Յուսարերին*:
37. Բարազեան, էջ 68: *Յուսարերի* մէջ յոյս տեսած Նաւասարդեանի «Մեր պատասխանը» գրութիւնը յոյս տեսաւ նաեւ Թեհրանի մէջ, որուն համար տես՝ *Ալիք* (օրաթերթ), 12 եւ 13 Սեպտեմբեր 1945:
38. *Հայրենիք* (օրաթերթ), Պոսթըն, 2 Հոկտեմբեր 1945:
39. Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Սոցիալ Դիմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը եւ Հայ Համայնավարները:
40. Պրոֆ. Աշոտ Արքահամեան, *Համառոտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի Պատմութեան*, հտ. Բ., Երեւան, 1967, էջ 410:
41. Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, *Հայ Ժողովրդի Պատմութիւն*,

- հտ. Ը., Երևան, 1970, էջ 154: Ասկէ ետք կը նշուի որպէս *Պատմութիւն*:
42. Վաւերաբույրը սխալմամբ ունի ժ. Միսրիան անունը:
 43. F.O. 371/47956/3992:
 44. Sarkis Atamian, *The Armenian Community*, New York, 1955, p. 402.
 45. Թորյախեան, 541. տես նաեւ՝ Գեորգեան, էջ 140:
 46. *Արեւիկ Տարեգիրք* (Հալեպ), 1948, էջ 73-77: Բաղդատէ՝ Անդրանիկ Մառուկեան, *Մեծերը եւ... Միւսները*, Պէյրութ, 1992, էջ 208:
 47. Hagop A. Tarkmanian, *The Truth About the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire, 1915-1922*, [Beirut], 1975, p. 32.
 48. Տիգրան Կիլիզեան, «Երկրորդ Աշխարհամարտի մեծ հերոս Նախագահ Ֆրանկլին Ռուզվելթ», *Զարթօնք* (օրաթերթ), Պէյրութ, 10 Փետրուար 1987:
 49. *Պատմութիւն*, էջ 144:
 50. Պրոֆ. Ծ. Ռ. Յարութիւնեան, *Հայ Ժողովրդի Պատմութիւն*, հտ. Դ., Երևան, 1970, էջ 360:
 51. Ռ. Շիրինեան, «Թէ ի՞նչպէս Համազասպ Բարաջանեանը դարձաւ մարաշախ եւ Սովետական Միութեան բանկային գործերու հրամանատար», *Ազգային Մշակոյթ* (շաբաթաթերթ), թիւ 21, 8 Ապրիլ 1984, էջ 4:
 52. «Հայ օդաչուի սխրանքը», *Արարատ* (օրաթերթ), Պէյրութ, 13 Յուլիս, 1985:
 53. Գերմաներէն *Ֆիւչրեր*՝ առաջնորդ. բռնատիրական իշխանութիւն վարող ղեկավար: Հոս՝ գերման նացիներու պետ:
 54. Գերման խորհրդարանը:
 55. Այս եւ յետագայ բոլոր արձանագրութիւններուն համար տես՝ Ա. Սահրաւեան, «Ռայխսբանկի գառնից», *Նայիրի* (շաբաթաթերթ). Ժէ. տարի, թիւ 13, 31 Օգոստոս 1969, էջ 8:
 56. Պատերազմի ընթացքին յարձակողական կամ պաշտպանողական գործողութիւնները ղեկավարող մարդ, որ կը գատկանի Կարմիր Բանակի հին, մասնաւոր եւ ռազմական խոր փորձ ունեցող զօրաբաժինին:
 57. Կուլտուրա՝ մշակոյթ:
 58. *Էջմիածին* (ամսագիր), Բ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, 1945, էջ 3. տես նաեւ՝ *Սովետական Հայաստան* (օրաթերթ), թիւ 77 (7300), Երևան, 20 Ապրիլ 1945:
 59. *Keesing's Contemporary Archives*, p. 7737a.
 60. Dean Acheson, *Present at the Creation : My Years in the State Department*, New York, 1969, pp. 199-200.
 61. Թրեական *Միլիթէն* բարգմանաբար տրուած Պոլսոյ *Մարմարային* մէջ, որմէ արտատուուած է իրանանահայ մամուլին մէջ: Տես՝ *Ազգակ* (օրաթերթ), 14 Յունիս 1979:
 61. «Հայկական Դատը եւ Խորհրդային Միութիւնը», *Արարատ* (օրաթերթ), 26 Յունուար 1981: Իրականութեան մէջ՝ օրաթերթին տուածը կը վերցնուի Ա. Ա. Կրումիճոյի խմբագրութեամբ եւ ռուսերէնով լոյս տեսած հատորէ մը՝ *Խորհրդային Միութիւնը Միջազգային Կոնֆերանսներում՝ Հայրենական Մեծ Պատերազմի Ժամանակաշրջանում՝ 1941-1945 թ.*, հտ. Զ., Մոսկուա, 1980, էջ 37-41: Մեծք մէջբերեցինք արեւելահայերէնը արեւմտահայերէնի վերածելէ ետք: Ասկէ ետք կը նշուի որպէս *Խորհրդային Միութիւնը...*:
 63. F.O. 371/48795.
 64. Տես՝ *Խորհրդային Միութիւնը...*, էջ 41:
 65. Նոյն, էջ 144-145:

66. Նոյն:
 67. Harry S. Truman, **Memoires; Year of Decision**, Signet paperback, New York, 1965, p. 413.
 68. F.O. 371/48751.
 69. Բուն անունով՝ Արմենակ Արտեմի Խանփերեանց:
 70. *Սովետական Հայաստան* (ամսագիր), Երևան, 1980, էջ 8-9:

Ջ. Մ.

ARMENIANS AND THE END OF THE SECOND WORLD WAR

SUMMARY

ZAVEN MESSERLIAN

With an abundant use of archival material and official publications, as well as Armenian, English, French and Turkish studies and newspaper articles, the author portrays a vivid picture of the political and military relations of the so-called Berlin Armenian National Council on one side and the Nazi authorities on the other, and gives the almost untold story of the forming and activities of sundry Armenian groups and formations in Nazi Germany, of the role of Soviet Armenian forces in the fall of Berlin in the May of 1945, of the meetings of Yalta and Potsdam, and of the Soviet (= Armenian) demands to rectify the Turco-Armenian frontier and their failure because of the British stand.

The article is an attempt in making an overall approach to the last phase of the Second World War and the Armenian military activities therein, and hence comprises several sections each dealing with a particular page of a different type of relations among the warring parties of the day. These sections shed light on

- «The Yalta meeting and Turkey,»
- «The conditions of the Armenians cooperating with the nazi government of Berlin,»
- «The stand of the Armenian Diaspora in the decisive days of 1945,»
- «The death of President Roosevelt and the Armenians,»
- «The role of the Armenian units in 1945,»
- «The new phase of the Armenian Question,»
- «The end of the Second World War,»

At the end of the article the author does not hesitate to conclude that, though victorious as a component part of the Soviet Union and its people, due to the world politics of the Great Victors, the Armenians could not achieve the retrocession of some regions of their fatherland, namely of Kars, Artahan and Artvin, lost to the Turks in 1920, to their present yet decimated fatherland, the Republic of Soviet Socialist Armenia of 1945.